



«30» 11 2016թ.

N 49

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱԿՐԱՄԱՆՅԱՆԻՆ»

Կից Ձեզ են ուղարկում Արմավիր մարզի Շենավան համայնքի ղեկավարի N6 ⁸ դիմումը:

Համայնքային ծառայողների ատեստավորման մասին:

Հետքեր 3 կգ:

Համայնքի ղեկավար



Ա. Մկրտչյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ստից թիվ *112.33/13432-16*
12 2016 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 6

16-ը Նոյեմբերի 2016թ.

գ. Շենավան

Համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու մասին.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով
ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Շենավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ծառայողներ՝
Աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/
Առաջատար մասնագետների /ծածկագիր 3.1-1, 3-1-2/
Առաջի կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-2/ ատեստավորումն անցկացնել սույն թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 12-00ին:

2. Ատեստավորման նախապատրաստման աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԿՐՏՉՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

ՈՐՈՇՈՒՄ N 7

16-ը Նոյեմբերի 2016թ.

գ. Շենավան

Համայնքային ծառայության Մրցութային և Ատեստավորման հանձնաժողով ստեղծելու, նախորդ 27-ը Նոյեմբերի 2013թվականի թիվ 3Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Ղեկավարվելով «Համայնքային Ծառայության Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում «Փոփոխություններ և Լրացումներ Կատարելու Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով, «Իարավական Ակտերի Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Գ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Շենավանի գյուղական համայնքի ավագանու 2016թվականի Հոկտեմբերի 25-ի թիվ 4 նիստի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին» թիվ 11Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման նոր հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝	Արթուր Մկրտչյան – համայնքի ղեկավար
Հանձնաժողովի անդամ՝	Սահակ Սիմոնյան -- ավագանու անդամ
Հանձնաժողովի անդամ՝	Արա Մկրտչյան -- ավագանու անդամ
Հանձնաժողովի անդամ՝	Վարազդատ Մկրտչյան – ՀՀ Արմավիր մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ.
Հանձնաժողովի անդամ՝	Գոռ Հովհաննիսյան – ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ
Հանձնաժողովի անդամ՝	Լիաննա Հարությունյան -- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 27-ը Նոյեմբերի 2013թվականի թիվ 3 Ա որոշումը
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8

16-ը Նոյեմբերի 2016թ.

գ. Շենավան

Համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու նպատակով
լիազորված անձ նշանակելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի
2006թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի
օրինակելի աշխատակարգ» N 12-Ն հրամանի առաջին մասի 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ատեստավորման տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով
լիազորված անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շենավան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Զավենի Պողոսյանին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՄԿՐՏՉՅԱՆ